

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ:

Յարեհան գինն է 7 արուրի (փոստի ծախսով): Օտարաբաղաբար՝
ցի բաժանորդները պիտի դիմեն այս հասցեով. Be Tushnet, Be Po-
danyio Armanecov Tosemoy „Mashay“.
Թիֆլիսում կարելի է օտարաբաղաբար խմորագործան մէջ (ըրբու-
նու տուն) և Իվանովի ընթերցարանում:

ՄԵՍԿԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուող պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կրպակ արծաթ: Յայտարարութիւնները
տպւում են չայերէն, ռուսերէն, վրացերէն, ճրանսխարէն, գերմա-
ներէն և ֆուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

IV

Բայց մի և նոյն ժամանակ, բայց մի մաս-
նագիտական կրթութեան (սպէցիալիզմ)
պահանջովու մէջ իւրաքանչիւր խմբագրից որ-
քան կարելի բազմազէտ լինել: Լրագիրը
աւօրեայ, կենդանի հարցեր քննելու ժամա-
նակ, պիտի իր կարծիքը յայտնէ ամենայն
երևոյթների վերա:

Այդ պաշտօնը լրացնում է խմբագրու-
թիւնը, զանազան մասնագիտական հմու-
թիւններ ունեցող անդամներից կազմւած:
Անգլիական Times լրագիրը ունէ իր խմ-
բագրութեան անդամների թւում բժշկներին,
իրաւաբաններին, ճարտարագետներին, ար-
հեստագէտներին և այլն:

V

Հիմի նոյնք ուրիշ կողմից եւրոպական
լրագրութեան ուղղութեան վերա:

Բոլոր եւրոպական լրագրութիւնը կարելի
է բաժանել երկու տեսակ. կրաւորական և
ներդրածական լրագրութեան:

Եթէ խոր կերպով գննենք եւրոպական
պարբերական թերթերը, կը համոզվենք որ
լրագիրների մեծ մասը ներդրածական են,
այսինքն, որ նոյնից ամեն միւր մի տեսակ,
յայտնի, որոշ ուղղութիւն ունենալով, նպա-
տակ ունէ ազդել ընթերցողների վերա, մտքը
նկն նրանց մէջ իր ուղղութիւնը, կրթել և
կազմել մի յայտնի ուղղութեան կուսակցու-
թիւն:

Կրաւորական լրագիրների թիւը շատ
փոքր է Եւրոպայում, և նոյնից ամենանը-
շանաւորները սոքա են. անգլիական Times,
բելգիական Indépendance Belge և գերմանա-
կան Allgemeine Zeitung. Այդ կրաւորական
լրագիրները չափից շատ տարածվելով, իրա-
ւունք չունեն սահմանափակվել մի նեղ, կու-
կել:

Երկու պէս կասի—չը գիտեմ, ես չեմ, բայց նրա
30-դ համարը կասի—Եթէ նա է:

Ինչ որ վերաբերում է մեզ, մենք լուսնում ենք
մեր ձեռները: Մեր սրանից յետոյ խօսալու մնոթ-
դր—Մեզում է մեզ տալի: Նա հրաւերէ ի կարգում
մեզ—մենք ստիպված ենք ընդունել նրա հրաւեր-
քը: Նա ասում է, լուսնի մասին ժամանակն անցաւ,
հիմի խօսելու ժամանակ է,—մենք էլ խօսում ենք:

♂

Մեզում չը գիտէ—ասի, ոչ իր անձը պաշտպա-
նելու: և ոչ էլ ուրիշների վերայ յարձակվելու
ձեռն—մնտօգան:

Էդ մասին ես ձեզ մի փոքրիկ օրինակ կը բ-
րեմ Ռուսաց օրագիրների բանակաւորութիւնից:

Մի քանի ամիս է, որ Պետերբուրգից—Վե-
րոսիայի (G.-U.-B.) լրագրի և Օրդ. 30-դ ա-
նուանված օրագրի մէջ սկսվել է գրականա-
կան—բանակաւորութիւն, — պօլեմիկայ: — Վերջի-
նի, — Օրդ. 30-դ խմբագրող աշխատակիցներից
մինը պ. Ն. Մ. դառնալով իր հակառակորդ Պե-
տերբուրգեան—Վեդոստի լրագրին ասում է—
Երբ ձեզ վերայ յարձակվում են (մենք էլ Մե. ուր-
վերայ շատ ենք յարձակվել—ձեռնարկում է) ու ցոյց
են տալի (մենք էլ միշտ ցոյց ենք տուել, միայն
լի խօսքեր չենք ասել նրանց պէս) ձեր սխալ-
ները, ու մի որ և ինչ ուղղութիւնից դուրս լինելը,
դուք փոխանակ հերքելու մեր յար-
ձակմունքները փաստերով սկսում էք կամ
հօմերոսեան ծիծաղներ արձակել ձեր հակառա-
կորդների վրէժին, որը Աստուած վկայ, յատուկ է մի-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրագրութեան նշանակութիւնը—
երբեքին տեսութիւն: Մեր հասարակական
բարձրը, Նամակ Աստուծանից: Նամակ Շու-
ուց: Նամակ Իզդիբից: Ներքին լուրեր:—Ար-
տաքին տեսութիւն: Ժէնէվի դաշնակցու-
թիւն և պատերազմ: Նամակ կարսից: Արտաքին
լուրեր:—Սառն լուրեր:—Առտարական:—
Յայտարարութիւններ:—Ֆիլիսոփա:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Խմբագրութիւն „Մշակ“ լրագրի
խնդրում է այն իր բաժանորդներից
(թէ Թիֆլիսի թէ գաւառների մէջ)
որք մինչև այժմ ներկայ 1872 տա-
րու բաժանորդութեան վճարը հա-
տուցած չեն, ուղարկել խմբագ-
րութեանը իրանց տարեկան վը-
ճարը:

ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

I

Ինչ յատկութիւններ պիտի ունեցած
օրագրութեան ասպարէզը մոնելու համար:
Առաջին և գլխաւոր յատկութիւնը պիտի
լինի. առաջադիմութիւն: Շարունակ ա-
ռաջ գնալ, զարգանալ, հետեւել նոր մտքերին,
մարդկային մաքի զարգացման ընթացքին...:
Առանց այս առաջին և անհրաժեշտ յատ-
կութեան, լաւ է որ օրագրութեամբ պարա-
պել յանձն առնողը կոչակարութեամբ պա-
րապէ...բայց միթէ կոչակարը կարող է յու-
սալ որ միշտ առնող կունենայ եթէ նա իր
կոչիկներ կարելու ձեռք երբեք չի փոխի, չի
կատարելագործի, այլ կը պտտրտտէ իր վա-
ճառը հին, նահապետական ձեռով...:

ՖԵԼԻԵՏՈՆ

Մեզում լալիս է.—Լացի պատճառը իր փորա-
ցան է.—Փորացալի պատճառն էլ Մշակն է: Մե-
ղուի մետոյան—G. Per. B. և Օրդ. 30-դ բա-
ցուած պօլեմիկան:—Ընտրութիւններ:—Գրա հե-
տեանքը—Հետեւելու գոհերը:—Մեղանում յար-
ձակողական գրուածը պախարակելի բան է հա-
մարվում:—Մեղուի քաղաքական խօսքերը:—Ին-
չի մենք էլ պամֆլէտ չենք գրում:—Նամակ Հայու-
թեան—Տակի—Մասխարին:

Veni, vidi, vici, Կեսարի օրհասական խօս-
քերն են, որ կը նշանակի,—եկի, տեսի, յաղթեցի:
Էդ երեք բառով հռոմէական—կիսաստուածը կար-
դաց իր վերջին դամբանական ճառը փոքր Ասիայի
վերայ, իր ալֆան և օմեգան:

Գրա նման երեք չարագուշակ բառով էլ զըժ-
բախտութիւնից ձիւ և աղաղակ բարձրացնող Մե-
ղուն նորերումն կարդաց իր զլխին. իր պատուա-
կան գլխին—խումբը կազմակերպ, գործեց, և ներ-
գործեց: (տես Մեղ. 29 համարը)

Նրա 29—և 30-դ համարի առաջնորդող յո-
գաւածները իր մինչև այսօր կրած բարոյական
մտաբանների արտայայտութիւնն է, իր մահամորձ
խոստովանութիւնը, որից պարզ երևում է թէ՛
պատմութեան անգույթ Նեմիդիական չարագուշակ
փայտով փայտաց մեր հասարակական գործունէու-
թեան մօտօպօլիտաների գլխին, այս սեպտեմբեր
ամսուայ 3-ին, Ներսիսեան ուսումնարանի համար
նշանակված պատգամաւորների ընտրութեան օրը.
որով զրկեցաւ օրհամական կնիքը, յիշաւ մինե-

Առաջադիմութիւնը, այսինքն անդա-
ղար ձգտումն դէպի կատարելագործութիւն
ամեն հասարակական էակի, ամեն հիմնար-
կութեան, ամբողջ պետութիւնների անհրա-
ժեշտ, մահու ու կեանքի պայման է:

Ահա ձեզ օրինակ, ինչպէս ընկնում են
ոչ թէ միայն հասարակ մարդիկ կամ հիմ-
նարկութիւններ, այլ ամբողջ պետութիւն-
ներ. մինչև որ Գերմանիան կատարելագործ-
վում էր, Ֆրանսիան վերջին տարիները ինք-
նահաւանութեան կուրացած, ոչինչ առա-
ջադիմութիւն չէր անում, ոչ ազգային լու-
սաւորութեան ոչ զինուորական արհեստի
կողմից, և երբ պատերազմը բացվեցաւ,—
Ֆրանսիան յաղթվեցաւ:

II

Ամեն մարդ, թէ գիտնական, թէ արհես-
տաւոր, թէ զինուորական և այլն, պիտի ան-
դաղար առաջ գնալ, կատարելագործվի,—
շատ լաւ...բայց առաջադիմութեան դիմելուց
առաջ նա մէկ հիմք էլ պիտի ունենայ, պիտի
նախ և առաջ մէկ բան էլ մասնաւորապէս
գիտենայ...գերծիկը պիտի իմանայ չորեր կա-
րել, որ կարողանայ իր արվեստի մէջ առա-
ջադիմութիւն անել:

Իսկ մենք հայերս շատ անգամ ապացու-
ցել ենք, որ այդ հիմնական մաքի հետ էլ
համաձայն չենք, որովհետեւ շատ բնական ենք
գտնում որ մարդիկը, քաղաքական և հա-
սարակական գիտութեան ոչ մի ճիւղ մաս-
նաւորապէս ուսումնասիրած չը լինելով, սկսելն
օրագրի կամ լրագրի հրատարակել...

Եթէ արվեստաւորը մի բան սովորած պիտի
լինի որ իր արվեստով պարապէ, իրաւաբանը
իրաւաբանութիւն պիտի ուսումնասիրած լի-
նի, հոգեւորական աստուածաբանութիւն,—
ուրեմն ինչ իրաւունքով քաղաքական և

վաճառների հասարակական անընդունակ գործա-
կատարութեան վերայ, հետեւաբար—և նոյն ա մ-
բողջ գոյութեան վերայ:

Sic transit gloria mundi,—այսպէս է անց-
նում աշխարհի փառքը,—ասում է լատինական
առածը,—այդպէս էլ սեպտեմբերի 3-ին անցաւ մեր
յառաջադիմութեան վերայ թուիս նստող հաւերի
փառքը—ասում եմ ես:

Հիմի տեսնենք թէ ինչ է ասում ինքը միսիթար
դուրթեան մէջ գտնված հոգեվարը Մեղուն:

♂

Որպէս զի հոգեվարը Մեղուի ասածները լա-
հականանք, առաջ պէտքէ նրա հիւանդութեան
պատճառն իմանանք:

Մեղուն փորացաւ ունի պարոններ, իմանում է
թէ՛ ոչ. Ինքը ամիս է, որ նրա փորը ցաւում է,
իսկ դուք էդ խեղճ արարածի դրութիւնից ոչինչ
տեղեկութիւն չունիք:

Մեղուի փորացալի պատճառը Մշակն է, էջ բանը
յայտնեց նա իր 30-դ համարի մէջ՝ ամենապարզ
կերպիւ ակնարկելով նրա խմբագրութեան գոր-
ծակատար անձանց վերայ, որպէս զի հասարա-
կական կարծիքի դատապարտութեան տակ զցի-
ու դրանով մեր գլխին էլ էն օլիւր խաղա, ինչ որ
սրանից օրա տարի առաջ խաղաց անընդունակ
պառաւելների գլխին...:

Մենք աւելի պարզ կը խօսենք ընտրութիւն-
ների մասին ու կը հակադրենք Մեղուն՝ որ էջ
ստատիստիկական բարիմտութիւնը երբեք իրան յա-
ջողւում չէ:—Հիմիկուայ ու իր տեսած ժամա-
նակի և մարդկեանց մէջ սար ու ծորեր կան:

Հասարակական գիտութիւններից բոլորո-
վն դուրս անձինքը յանգնում են ասպարէզ
դուրս գալ հրատարակելով քաղաքական
պարբերական թերթ...

III

Եւրոպայի մեծ և նշանաւոր լրագիրների
խմբագիրներից իւրաքանչիւրը մի որ և է հա-
սարակական, քաղաքական, կամ իրաւաբա-
նական գիտութեան հետ մասնաւորապէս
ծանօթ է և այդ նորա հմուտութիւնը տա-
լիս է մի տեսակ ուղղութիւն, մի տեսակ
ձեւ, մի տեսակ գոյն իւր հրատարակու-
թեանը:

Այդ է պատճառ որ ամեն լրագիր ունէ
իր հայեացք, ունէ իր նպատակ, որին նա
ծառայում է. մինը գլխաւորապէս անտեսական
խնդիրները է յարուցանում, միւս իրաւա-
գիտական, երրորդը հասարակական և այլն:

Եթէ մի երկուսում շատ լրագիրներ կան,
ամեն մին իր ուղղութեամբ, այն ժամանակ
մի որ և է խնդիր զարթեւում պէս, լրագիր-
ներից իւրաքանչիւրը իր աչքով է նայում,
իր հայեացք է գցում խնդրի վերա: Ամեն
մինը դուք միակողմանի է, բայց հայեացք-
ների ընդհանրութիւնը նպատակում է խնդիրը
խղճմամբար և բազմակողմանի կերպով մշա-
կելու:

Եթէ մի մարդ բժշկականութիւն երբեք
ուսումնասիրած չը լինելով, սկսէ բժշկու-
թիւն անել,—մենք նորան անաղիւ, խաբէրայ,
շարլատան կանվանենք: Բայց մենք շատ
բնական ենք գտնում, որ մարդիկը, որք հա-
սարակական գիտութիւնների, քաղաքական-
տեսութեան, կամ խտակ քաղաքակա-
նութեան ոչ մի ճիւղ ուսումնասիրած չեն,
սկսելն մի քաղաքական թերթ հրատարա-
կել...

Հիմի իրանք մեզ համար էն մարդիկն են, ինչ որ
մի ժամանակ պատահեցին որ խաւարի արբանակ-
ները իրանց համար էին: Սխալվում է, եթէ ու-
րիշ տեսակ համեմատութիւն է գտնում:

♂

Եթէ ծառը պտղից է ճանաչվում, ուրեմն ար-
ժանապատիւ Մեղուի չարժանի սխալներն էլ իր
պիտանացու թերթներից:

Էդ իմաստութիւնով բարձած լրագիրը, վերջին
անգամ վերականգնեցաւ, որ վերջին անգամ
վերա—խայտառակվի, վերջին անգամ ընկնի, ու
իր աւերակների տակ թաղի, ինչպէս իրան (ան-
պատճառ իրան...Թող երազներ չը տեսնի) էն-
պէս էլ էն գործը... որին ամէնքս ծառայում ենք...

Էս բարի հետեւանքները պարոններ, առաջանում է
Մեղուի հետեւալ խոհմտութիւններից:

ա—Մեղուն չը գիտէ, ոչ իր անձը պաշտպա-
նելու, ոչ էլ ուրիշների վերա յարձակվելու ձեռ-
մնտօգան:

բ)—Մեղուն գրականական սուրբ խօսքը աղբի
հետ է չաղաղում:

գ)—Մեղուն զարթեցնում է հարցեր, որոնք ա-
նաղիւ հարցեր են...մեր դրութեան պահանջո-
ղութիւնից դուրս հարցեր, չը ծածկած, չը կշռած,
ու հանգիստ սրտով չը մտածած հարցեր:

Ապագան դարձուրելի դատաւոր կը դառնայ, երբ
էդ հարցերի շատ քրքրելուց... շատ մատով խառ-
նելուց... առաջանայ անսխալ հետեւանք... էն
մասնակի կը զարթնի մի հասարակական կար-
ծածանակ կը զարթնի մի հասարակական կար-
ծիքը հարցը—էվ է մեղաւոր: Մեղուն լալիս

սակցական հայեցողքների և համոզմունքների մէջ, այլ նոցա հիմնական ուղղութիւնը և սկզբունքն է բաւականացնել ամեն տեսակ կուսակցութիւնների, ամեն ուղղութեան մարդիկների պահանջներին: Աւստի նորա իրանց էջերի մէջ տպուած են ամեն ուղղութեան յօդվածները:

VI

Բայց կարող են արգիւտ աջակցել և օգուտ կը բերեն արդեօք այդ տեսակ լրագրիները այն երկրներում, որտեղ կուսակցութիւններ գեւ ևս չեն որոշվել, չեն կազմվել, կամ որտեղ կուսակցութիւնների թիւը քիչ է:

Կրաւորական լրագրիները այդ տեսակ հասարակութեան մէջ ոչ աջակցել կարող են, ոչ օգուտ բերել:

Պէտք է մարդը արդէն զարգացած լինի, պէտք է կուսակցութիւններ որոշված լինին, պէտք է հաստատ, անխախտ յամոզմունքներ ունենան թէ մասնաւոր մարդիկը թէ կուսակցութիւնները որ լրագրի մէջ պատահելով ամեն տեսակ ուղղութեան, ամեն տեսակ համոզմունքների և հայեցողքների արտայայտութիւնը, նոքա չը շփոթվեն, չը թափառեն չը խառնվեն, այլ զանազան, ամենատարբեր մտքերին անգաղափար յանգեցնելով դարձեալ կարողանան դուրս բերել իրանց համար մի որոշ ուղղութիւն, իրանց կարողանան իրանց համար մշակել սեպհական, անհատական համոզմունքներ ու հայեցողքներ...

VII

Այն երկրներում, որտեղ մարդիկը դեռ ևս չունեն իրանց համար մի որոշ ուղղութիւն, որտեղ չը կան, կամ նոր են սկսում կազմվել կուսակցութիւնները, այնտեղ հարկաւոր է խիստ և որոշ ուղղութեամբ ներգործական լրագրիներ, որոնցից իւրաքանչիւրը մի տեսակ ուղղութեան արտայայտութիւն լինելով մի և նոյն ժամանակ կազդէ յայտնի, որոշ ուղղութեամբ կարգադրի վերա, կը կրթէ ու կը պատրաստէ մի ամբողջ կուսակցութիւն:

Եւ անգաղափար հասարակութիւնների մէջ, որտեղ պարտիաներ (կուսակցութիւններ) քիչ են, կամ բաւական որոշված չեն, այն հասարակութիւնների մէջ չեն էլ աջակցութիւն կրաւորական լրագրիները:

Ամենից շատ կրաւորական լրագրիներ կան գերմանական ցեղերի մէջ. Աղիւսում, Ամերիկայում և Քրեմանիայում, որտեղ ամենից շատ զարգացած է կուսակցութիւնը, մարդիկ զարգացած են անհատապէս, անթիւ

կուսակցութիւններ կան, և նոցանից ամեն մէկը խիստ կերպով որոշվում է ուրիշներին:

Իսկ Գրանտիայում ոչ մի կրաւորական քաղաքական լրագիր կամ օրագիր չը կայ:

VIII

Մեր հայերի պէս հասարակութեան համար մենք անհրաժեշտ ենք համարում, որ լրագրիների և օրագրիների թիւը բազմանա լով մի որոշ. ներգործական ուղղութիւն ունենայ: Մեզ համար դեռ ևս վաղ է, քիչ տարակարգ է և անիրագործելի է կրաւորական քաղաքական լրագրի:

Բայց եթէ մեկանում պատահամար խումբ լրագրիների կրթութեան պահանջներն, կամ լրագրութեան նշանակութեան վերա կատարեալ տգիտութեան պատճառով, կազմվի կրաւորական մի թերթ, նա չի լինի ընդհանրական, ընդարձակ, ազնիւ բարի նշանակութեամբ կրաւորական, — այլ շատ շատ կը լինի միայն անգոյն, իսկ գէպքերի մեծ մասամբ յիմար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Մեր անցեալ յօդվածում մենք քննեցինք այն մեղադրանքները, որք ուղղված են եղել „KABKAB“ լրագրի յօդվածագրից մեր քաղաքի գործողների դէմ. մենք աշխատեցինք, որքան կարելի է, ցոյց տալ մինչև որ աստիճանի արդար կարող է համարվել այդ մեղադրանքը, աչքի առաջն ունենալով այն դրութիւնը, որի մէջ գտնվում է այս օրակէս մեր քաղաքային ինքնակառավարութիւնը:

Այժմ մենք կամենում ենք դարձեալ մի անգամ կրկնել այն եզրակացութիւնը, որ մենք դուրս բերեցինք յօդվածի վերջը, համարելով յիշված հետևանքը հարցի վերա ուղիղ հայացքի համար, վերին աստիճանի նշանաւոր: Մասնաւոր նշանաւոր է, մեր կարծիքով, դուրս բերած եզրակացութիւնը, որովհետև այժմեան ժամանակում եթէ հաւատարմը „KABKAB“ լրագրին, յարուցվում է խնդիր Կոմիտեան և Անդրկովկասեան քաղաքներին հործարել քաղաքային նոր կանոնադրութիւնը:

Ահա մեր դուրս բերած եզրակացութիւնը:

Քաղաքային գումարների բաժանելը և ծախսելը մեծ մասամբ կախված է քաղաքային վարչութեան գործողներից, իսկ քննարկող գումարը, որ իրաւունք ունի հործ գնել վարչութիւնը, այնքան անշահ է, որ նորա

միջոցով անկարելի է բաւականացնել քաղաքի բոլոր պահանջներին:

Մի և նոյն ժամանակ մենք չենք կարող չը համաձայնել „KABKAB“ լրագրի հետ, որ այս կամ այն բաների հարկաւորութիւն ունենք, որ մենք չունենք ջրանցք, չունենք դպրի լուսաւորութիւն, չունենք անմաքութիւնների համար խողովակներ, չունենք շատ ուրիշ ամենամահաճեալ բաներ:

Այդ բոլորը ձեւարար է, բայց ինչ պիտի արած, ուր վերցրած այդ բոլոր բաների համար փող:

Մենք տեսնեք, որ այն 360 հազար ռուբլից, որ քաղաքի մուտք է ներկայացնում, նշանաւոր մասը, անցնելով վարչութեան ձեռքերից, նուիրվում է աւաճուց որոշված և նորանից անկախ ծախսերին: Ուրեմն, գումար ունենալու համար, քաղաքային վարչութիւնը պիտի դիմէր հարկերի մեծացնելուն, որպէս միակ միջոցին անկու ծախսերը ծածկելու համար: Ուրիշ կը չը կայ:

Բայց այդ տեսակ ելքը ահայտ է, որովհետև նա պատճառում է չափազանց մեծ ծանրութիւն քաղաքի հարկատու դասերին:

Այժմեան ժամանակին հարկատու դասերի վերա հեղինակութիւն ունեցող մարդիկը այսպէս են խօսում. „հարկատու դասերի նշանաւոր մասը գտնվում է սարսափելի չքաւորութեան մէջ. ծերունիներ որոշ վերա ծանրացած են տարիները, տանջվում են սովի մէջ, խեղճ այրի կանայք և որբեր, — այս բոլորը ներկայացնում է մեզ մի պատկեր, որ կարող է իւրաքանչիւր մարդի մէջ ահ ու սարսափ գցել“ („KABKAB“ № 98)

Եւ միթէ կարելի է դարձեալ նոր հարկերը պահանջել այդ թշուառներից, միթէ կարելի է զրկել նոցա վերջին փշուռներից, որոշ միջոցով նոքա իրանց ողորմելի կեանք են տանում...

Այդ թշուառների դրութիւնը այնքան անտանելի է, որ „պատասխանի“ հեղինակը, խօսելով քաղաքի ապառիկների մասին, այսպէս է արտայայտում իր միտքը. „ոչ մի ստիպողական միջոց այդ տեսակ թշուառների վերաբերութեամբ օգուտ չի բերի, բայց կաւելացնէ մի կողմից նոցա տանջանքը, և միւս կողմից ինքն վարչութեան համար ժամանակի կորուստ կը լինի: (Տես „KABKAB“ № 98 լրագրի երեք յօդվածներին տուած պատասխան):

Մենք մեր կողմից չունենք ոչինչ աւելացնելու այդ պատկերին, որ բաւական ճարտարութեամբ արտայայտել է հեղինակը: Եւ երևում է, որ նա անմիջական յարաբե-

րութիւնների մէջ է գտնվում իր նկարագրի մի քանի դասերի հետ:

Մենք միայն այսքան կասեցնենք: Չը հաստատ յիշված իրողութեան ձեւարարութեանը, հերքել նորան, պահանջել հարկերի մեծացնելը, — նշանակում է կամ չը տեսնել, որ աչքերիդ առաջ պատահում է, կամ (աւելի վատ է) չը կամենայ տեսնել...

Բայց վերջապէս հարցնում ենք, որտեղից պիտի վերցնվին հարկաւոր գումարները: Ահա այն հարցը, որ ինքն իրանից առաջարկվում միզ երբ մտածում ենք այն բոլոր բաների վերա, որք մեզ պակաս են:

Դառնանք ուրեմն կրկին անգամ այն թուանշաններին, որք գտնուում են „KABKAB“ լրագրի մէջ, և փորձենք պարզել յետադալ խնդիրը: Փոփոխական են թէ փոփոխական չեն այն ծախսերը որք մեծ են, անցեալ յօդվածում մենք անհրաժեշտ անուանեցինք:

Պարզապէս ուրիշ թուանշաններ ձեռք բերելու չունենալով բացի „Կովկաս“ լրագրի մէջ յիշվածներից, ստիպված ենք նոցանով բաւականանալ:

Հետազոտենք նոցանից մի քանիսները: 1868 թուին բնակարանի հարկը հասնում էր 99 հազարին: Նոյն հարկը 1872 ընկաւ մինչև 92 հազարը: Պարզ է, որ այդ հարկը փոփոխական է, որ այսօր կարող է մեծ լինել, վաղը կարող է սրճական և փոխարձակապէս, — նայելով թէ քաղաքում կա՞նք կամ կը նուազէ զօրքի քանակութիւնը, որովհետև ամեն մի նոր մոտոզ զօրք քաղաքի մէջ բնակարանի հարկաւորութիւն ունէ, որ քաղաքը պարտաւորվում է ներկայացնել նորան, կամ բնակարանի տեղը բնակիչը միջոց, այսինքն փող: Ուրիշ կողմից երբ զօրքի մի մաս թողնում է քաղաքը, նա ստանով առիթ է տալիս քաղաքին խնայել մի յայտնի գումար:

Բայց ինչն պիտի դործ դրվին այդ փողերը, — այդ պարզվում է անցեալ տարվայ օրինակից: Երբ պակասեցրած էր բնակարանի հարկը, այն ժամանակ աւելացան այն գումարները, որք քաղաքից դործ են դրվում դանազան բարեգործական և հասարակական հիմնարկութիւնների օժանդակելուն: Օրոշ տարիք է և շոշափելի: Ահա թուանշանները: 1868 թուին քաղաքը այդ հիմնարկութիւններին կարող էր դործ դնել միայն 3 հազար ռ., իսկ 1872 թ. գումարը աճեց մինչև 12 հազարը: Չուղղված սորա հետ բնակարանի հարկը ընկաւ աւելի քան 7 հազարով: Պարզ է որքան սերտ է երկու իրողութիւն-

միայն հիւանդային դրութեան, կամ թէ չէ մի և նոյն միտքը, մի և նոյն սխալը որ ուրիշները ձեռք համար էին տակ, դուք ձեռք պաշտպանութիւնը գտնում էք նրանում, որ դուք էլ նոյնը ուրիշներին աւսէք: Ձեր էլ վարմունքը, նմանում է իմ ծանօթ վեց տարեկան աղջկայ այն վարմունքին, որին ես շատ անգամ հանդիպել եմ: Կանգնում եմ — և աւելւում է իմ իցնա: (Կալբաս շինող-աղջիկ) ըստ օրում կալբաս շատ է սիրում. բայց որը միշտ ինձ պատահանում է — դու ինքը ես կալբասն իցա: Նա չը մտածում ոչ լօգիկայի, ոչ քերականութեան, ոչ հոյովների և ոչ էլ վերջապէս էն բանի վերայ, որ ես իզական սեւին չեմ պատկանում, ուրեմն կալբասնից (կալբաս-շինող-աղջիկ) էլ չեմ կարող դառնալ: Նրան հարկաւոր էր իմ ուղղած հարուածը յետ դարձնել, ու յետ է դարձնում ամբողջութեամբ: Պետերբուրգեան — Վէրդոստի գործ դրած պոէմիկան և իր անձի պաշտպանութիւնն էլ էր տեսակ է — ասում է պ. Ն. Մ.

Մի և նոյն անտակտ մտաւորան էլ մեր իմաստուն Մեղուն է դործ դնում, երբ բանը գալիս է իր դուրսը պաշտպանելու: Սիր նրանց, թէ ձեր ծակափայն պօղ է դուրս եկել — ձեր ծակափայն է պօղ դուրս եկել — կը պատահանեն խելոյն, չը կարողանալով հաստատել, որ դիպումաւոր երկաթապողների ծակափայն պօղն ինչ բան ունի:

Սիր նրանց, թէ ձեր 4-դ համարում, մէկ մէկու հակառակ պատմական փաստեր էք առաջ բերում: Ցոյց տուր համարը, համարի տողերը որոնց մէջ պարունակված են մէկ մէկու հակառակ մըտ-

քերը, դարձեալ ոչինչ չի աղիլ նրանց վերայ — Գուք ինքներդ էք հակառակում, որ կը նշանակի թէ — դուք ինքներդ էք կալբասն իցա:

Սպառնացիր, խնդիր, համեստ խօսիր, ինչ գուգն աւր, դուրով, խաթրով, վկաների մօտ, վերջից բռնած, հրապարակի մէջ, դատաստանի առաջ, ձեռներին տու իրանց 16-դ համարը, որտեղ ամենին չը ծնած ու աշխարհը չեկած իզարեյաբ-ին ուժով ծնացնում են 30 թուին, իսպանիայի դաշի վերա են պղզպղեցնում, խեղճ Զերդինան-դոս ՎԻԻ-ի գլխին ինչ օլիմներ ասես որ չեն խաղացնում, ասա, որ էդ ամէնը ցնորք է, աշխարհ-պէս ոչ մի պատմական զբերում չի գրած, էդ պէս վայրկիւրի կերպիւր արտաքին տեսութեան զրեւ չի կարելի, էդ առակախօսութիւն է — դուք ինքներդ էք առակախօս, դուք ինքներդ էք ցընորում, կասեն, ու կը նմանեն դարձեալ վեց տարեկան աղջկայ իր գլուխն պաշտպանելու մտօղին — դուք ինքներդ էք կալբասն իցա...

Էս պարունակը, Մեղուն դիպումաւոր խմբագրութեան պաշտպանողական ձեռն է, հիմի տեսէք նրա յարձակողական մտաւորան:

Ինչ գուգն է կտամ, եթէ յետինը չար չը լինի, քան առաջինը:

Անպաճառ չար կը լինի: Արդէն մի անգամ ես ձեռք ասի, որ Մեղուն փողապու ունի: Այն ես ձեռք ասի, որ նրա փողապու պատճառը Մշակն է:

Իրաւունք ունի:

Էն բարոյական քօթակը որ տաս ամիս շարունակ մշակից կերաւ, բայց չը մարսեց, և էն հետևանքը որ սեպտեմբերի 3-ին, 10-ին, 11-ին, և 12-ին — Ներսիսեան դպրոցի համար նշանակված թէ պատգամաւոր և թէ հոգաբարձու ջոկելու օրերում — առաջացաւ էդ քօթակից — առջերին անգամ կը շփոթէր: Ի՞նչ թէ միայն գրանց:

Հիմի պարզ ենք, թէ հետևանք ասելով ինչ ենք հասկանում:

Հետևանք ասելով էն ենք հասկանում պարուններ, որ Ներսիսեան դպրոցի նորընտիր հոգաբարձուքը, Մեղունի նպատակներին սարքալ մարդիք չեն — ինչպէս ասում են թիֆլիզցիք:

— Ուր կը նշանակի թէ: Մեղունի ուղած մարդիքը չը ջոկելցին:

— Այս, որ կը նշանակի:

— Ուրեմն դուք ջոկեալցիք:

— Երբէք ոչ, և ամենին ոչ, Մեղունից պատգամաւոր ջոկելցին ամէնը, իսկ հոգաբարձու միմիայն միւրը, որ առանց մեր խմբագրութեան անձանց ձայների էլ, մնացած պատգամաւորների երկու երրորդ ձայնը ստացաւ:

— Ուրեմն 12 հոգաբարձուներից տասն և մէկը ուրիշ անձինք են:

— Այո, ուրիշ անձինք, բայց էնպիսի անձինք, որոնց մասին մեր խմբագրութիւնը համոզված է, որ աւելի լաւ դործ կը կատարեն քան նախորդները:

— Իսկ Մեղուն անն էր կամենու ընտրել:

— Իրանց:

— Ինչպէս թէ իրանց:

— Իրանց խմբագրողներին, Ներսիսեան դպրոցի իրանց ընկեր վարժապետներին (ի հարկէ մին քան նիւսնիք բացառութեամբ) խելոյն ու պղուղին, ուժով ինչ ու բռնուլին:

— Ինչ էին ուղում դառնալ:

— Հոգաբարձուներ:

— Եւայդ էլ ինչ, քուէպրկիցան:

— Եւայդ:

— Եւայդ էն, որ բոլորն էլ սեւացան:

Սեւացան հիմա... Էդպէս ասա օրհնած հոգի էլ ինչ ես ծածկում: Ասա սեւացան, մենք էլ էն ժամանակը կասենք, թէ ինչի համար Մեղուն իր վերջին համարներով պատ է պատէ կալբաս: Հաշուել շատ բան (հիմ... ..) իսկ ստանալ զօր, (էլի հիմ... ..) — անպատուութեան պղծի մէջ խաչվելուց ինչ դանաղանութիւն ունի: Գարը կը տըրաբեր, չէ թէ Մեղուն պէս աղիւ տարաւոր:

Մեղուն էլ տըրաբեցաւ:

Ինչ դուրս եկաւ էդ տըրաբեցաւ:

Էն դուրս եկաւ, որ գրականական սուրբ խօսքը աղբի հետ է շահագործ:

Մեղունում առանց էն էլ (չը դիտեմ, որ լուսաւորեալ աղբի գրականական մետոդան օրինակելով) ամէն մի յարձակողական ձեռով դրուած — համարվում է անձնական կրքերից յառաջացած պակասարկելի բան: Մենք էր մարդերից չենք, և

նարկութիւններ, նորութիւններ արհեստները դե-
տաւութեանը և արդիւնադրութեան. փոքր յօդուած-
ներ այդ առարկաների վերաբերմամբ: Ը) Յայ-
տարարութիւններ: Տարեկան բաժանորդութեան
դիմել է 5 ռուբլի:

Գեղարդիւնների թիւը, որը մտնում են համա-
տարաններ, նշանաւոր կերպով նուազեցաւ: Ռուս
լրագիրները կարծում են, որ սորա պատճառը այն
է որ գիմնադրամները մեծ դժուարութեամբ կա-
րողանում են կլասիկային գիմնադրամների
ուսման ընթացքը ըմբռնել:

С. П. Бет. Լրագիրը ասում է որ այս տարի գիմ-
նադրամների կառավարութիւնը ընտրած ատես-
տատները ստացած 499 ամենալաւ աշակերտներէն,
որը ներկայացան բժշկական Ակադեմիա հարցա-
քննութիւն անելու համար, ընդունվեցան միայն
202, իսկ մնացածները հարցաքննութիւն բռնել չը
կարողացան:

Այս օրերս թիֆլիսի մէջ պատահել է մարդա-
պանութիւնը: Մի ռուս աստիճանաւոր Տ...
սպանվեցաւ անցայտ չարագործների ձեռքով:

Մի ռուս աստիճանաւոր որ երկար էր ծառայում
թիֆլիսի մէջ պ. Ֆ... այս օրերս կախվեցաւ,
թողնելով մի բազմաթիւ ընտանիք:

Վերջապէս թիֆլիսից կարողացան փորձել ինչ
է երկաթուղին, հոկտեմբերի 1-ին ահագին բազ-
մութիւն հասարակութեան զանազան դասերի, նըս-
տեցին վազճանները, գնացին Մցկէթի տօնը և մի
և նոյն օրը էլի յետ եկան:

Նի Ժնիւ-ն օվօգօրօդի մէջ խօյրան ամեն
օր սաստկանում է:

Ռուսաստանի կանանց ուսումնարանները (խս-
տիտուսները) С. П. Бет. Լրագիրը խօսքերին նայելով,
պիտի մի վերանորոգութեան ենթարկվին, այսինքն
որ բացի ուսումնարանի մէջ կենող օրիորդներէն,
թաղ կը արվին և երթնեն աշակերտութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ժԱՆԵՎԻ ԳԱՇՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԵՐԱՋՄ

III

Մեր 34-որդ համարի մէջ խօսելով
Ժէնէվի դաշնադրութեան վերա, մենք քնն-
նեցինք պատերազմի էութիւնը պատմա-
կան կերպով: Պ. Մուանիէից առաջարկ-
ված նախագծի վերա խօսելով, որի նպա-
տակն է վերջնել առհասարակ պատերազմը
և մտցնել նորա տեղը միջազգային միջնորդ
գատարարը, ազգերի մէջ ծագելու անբաւո-
կանութիւնը ոչ թէ սրով այլ արգար դա-
տաստանով վճռելու համար, մենք աւե-
լացրինք. հմուտ անգամ կը խօսենք և ոչ
բանի վերա թէ որքան մեր կարծիքով հիս-
րաւոր է այժմեան ժամանակին վերջնել պա-
տերազմը և որքան իրագործելի է միջազգա-
յին դատարարը:

Այս, մենք հարցնում ենք. այժմեան ժա-
մանակին միջան հնարաւոր և իրագործելի
է այդ տեսակ վերանորոգութիւն ..

Ինքն ըստ ինքեան պատերազմի գաղափարը
զգլիւն է ամեն մտածող էակին: Եւ մենք
ցոյց տուինք նորա գարշելի պատկերը և նո-
րանից ծագած բոլոր վնասը:

Բայց գուցէ ունէ այդ երեւոյթը և օգ-
տուէտ կողմերը, զոնէ մարդկային հասարա-
կութեան ներկայ դրութեան վերաբերու-
թեամբ:

Ներկայացնենք մեզ մի երկիր, կամ պե-
տութիւն, որ ծաղկած դրութեան մէջն է,
որին բոլոր հարեանները համարում են զօրեղ,
կրթված, առաջադէմ: Ամեն օր շինվում են
նոր ճանապարհներ, երկաթուղիներ, ջրանցք-
ներ. հրատարակվում են նոր զրբեր, օրագիր-
ներ. հիմնվում են գործարաններ, ուսումնարան-
ներ, համալսարաններ. շինվում են թատրոն-
ներ, կամուրջներ, թանգարաններ. կազմվում
են գիտնական, առևտրական, անասական ըն-

կերութիւններ, — մի խօսքով դրից նայողն
համար երկիրը ծաղկեալ դրութեան մէջն է:
Այս գրից նայողն համար է միայն յիշ-
ված երկիրը ծաղկեալ դրութեան մէջ, այլ
իրանք երկրի բնակիչները, պետութեան հպա-
տակները համազգած են թէ նոցա հայրե-
նիքը առաջադէմ է ..: Ի՞նչ է սորա պատ-
ճառը:

Պատճառը այն է, որ երկիրը ամեն կող-
մից ապահոված է երեւում, ամեն կողմից
բարեկարգված է համարվում, ներթափան-
կովոր առաջադէմ է ներկայանում, նոր
հիմնարկութիւնների, վերանորոգութիւննե-
րի թիւը, չափ ու սահման չունի ..: Այլ բան
միայն պակաս է. — ազատութիւնը:

Նորան պակաս է ամեն նոր թէ հասա-
րակական, թէ ընտանեկան, թէ պաշտօնա-
կան (պետական) երևոյթը քննելու ազա-
տութիւնը:

Իսկ երբ այդ իրաւունք չկայ, այսինքն չը
կայ թէ հասարակութեան, թէ տէրութեան
վարմունքը ինչպետար ազատութեամբ քննե-
լու իրաւունքը, — այն ժամանակ չէ էլ նկատ-
վում ոչ մի պակասութիւն, այլ ամեն
բան լաւ կողմից է երեւում:

Հետեանք այն է լինում որ մոցնվում են
վերանորոգութիւններ, երկիրը երեւում է նիւ-
թական, հասարակական, քաղաքական, մտա-
ւոր առաջադիմութեան շարունակ ընթացքի
մէջ գտնվելու, — բայց իսկապէս ազգը ան-
շարժ է, որովհետեւ մի բան չունի, և այդ
բանը ազատութիւնն է, որի բացակայու-
թեան պատճառով նա միջոց չունի ինքն
իրան անդադար, խտութեամբ քննելու, իր
ամեն մի քայլ անողորմ քննութեան տակ
զեղելու:

Բայց բացվում է պատերազմը, և այն բո-
լոր թէ նիւթական, թէ մտաւոր, թէ բարո-
յական պակասութիւնները, որը նկատելի է ին
նորան, երեւան են դալիս, յայտնվում են,
որովհետեւ պատերազմի ժամանակ ամեն ազգը
ստիպված է լինում գործ զենի իր բոլոր ոյ-
ժերը, թէ հասարակական կազմակերպու-
թեան, թէ բարոյական և մտաւոր կրթու-
թեան կողմից ..: Եւ այն ժամանակ յայտն-
վում է յանկարծ որ նա թող է, ագէտ է,
վատ կառավարված է:

Երկար չը խօսելու համար բաւականա-
նանք մի օրինակով — վերջին Ֆրանսիայի
պատերազմը Գերմանիայի հետ:

Խօսք չկայ որ Ժէնէվի դաշնադրութեան
նախագահ (պ. Մուանիէի) նախագիծը զեմ,
բարոյական, մարդասիրական, զգացմունքից է
շարժված, բայց նորա առաջարկութեանը
կարող են Եւրոպայի ազգերը (որոց թեւում
կը լինէ և Ֆրանսիան) ոչ ոք երկու խօսքով
պատասխանել: «Թող տուեցէ մեզ նախ և
առաջ հասնել կատարեալ ազատութեան,
և ապա մենք ուրախութեամբ կը զօհենք
ձեզ պատերազմի դադարիւրը»:

ՆԱՄԱԿ ԿԱՐՄԻՑ

Ազգերնուս գրականութեան զարգացման ի սրտէ
փափագող, հայ երիտասարդ մի աշաւասիկ կիւո-
թամ իմ կողմէս չնորհաւորել ձեր բազմաթէք
թերթը, որնոր իր նիւթից գեղեցկութեամբ, և լուրջ
խորհրդածութեամբ սակաւ միջոցի մէջ կարողա-
ցաւ գրաւել ճանկատանցի Հայոց համակրու-
թիւնը. բայց սոյն քաղցր և միայնգաման նուր-
բական պարտականութիւնս այսպէս անազան կա-
տարելու ձեռնամուկ ըլլալու մասին կանխաւ նե-
րողամտութիւնը կիսնդրեմ, վասն զի պատեհ առթ-
մը կսպասէի. այն ևս նախորդ ամսոյ 30 թիւ օրն
եղաւ. որոյ անցից մէկ համառօտ նկարագիրը կը-
փափագիմ որ աղաւթը լրագրոյդ մէկ անկիւնը
զետեղել բարեհաճիք:

Նորին Օգոստոսիաւ Կայսեր ամենայն ուսաց
անուանակոչութեան տարեդարձն ըլլալով, Տեղւոյս
ուստիական հիւպատոս վրեմ, Յոաննէս Պէյ Ռե-
ճանց աղաւթը երիտասարդ փափագելով որ
տարեդարձի հանդէսը ինչպէս Ռուսիոյ ամեն քա-
ղաքները նոյնպէս և Կարսը (Տաճկաստանի սահ-

մանալուրը) ամենայն շքեղութեամբ կատարուի,
ուստի փութաց հայաստանացի Սուրբ Եկեղեցիներ
նոյն օրը հանդիսաւոր պատարագ ընել տալ վասն
հողոյն հանգուցելու Կայսերական գերդատանին
և յերկարութիւն կենաց Նորին Կայսերական Մե-
ծութեան. և յետ աւարտան Սրբոյ պատարագի
յատուկ է կենդանութիւն Նորին բարեմաղթու-
թիւններ եղան, ուրանոր ներկայ էր վրեմ. Յոանն-
նէս Պէյն իր համազգեստը հագած, և ուստիոյ հա-
մայն հպատակը:

Հուսկ յետոյ խուռն բազմութեամբ է Հիւպատո-
սարանը գնացին, և անդ նորին վեմութիւնը վասն
կենաց Օգոստոսիաւ Կայսեր սրտողին բարեմաղ-
թութիւն մը ընկելով: և հանդիսականներէն ի ձայն
կէցցելից ծախարարութեամբ, մեկնեցան: Իսկ երե-
կոյն ժամ 7-12-ին սկսաւ հրախաղութիւն և լու-
սավառութիւն (հրաքահանդէս):

Սկստեմք, 8-ին Մամբրէ Բզնաւի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Պ. Էլմօն Աբու որին կաշնաւորեցին զեր-
մանական տէրութեան հրամանով, նորերումս դար-
ձեալ աղատեցին:

— Պրուսիայի տէրութիւնը կամենում է մտցնել
երկրի մէջ պարտաւ զէր քաղաքական ա-
մուսնութիւնը:

— Կ. Պօլսի „Levant—Herald“ լրագիրը աս-
ում է որ Թուրքերի և Ղարապաղցիների մէջ պա-
տահեց անբաւականութիւն և կռիւ: Թուրքիայի
տէրութիւնը յայտնել է որ այդ անկարողութիւն-
ների պատասխանատու նա կը ճանաչէ Ղարա-
պաղի խխանին, եթէ նորից կրկնվեցան անկար-
գութիւնները:

— Յայտնի ռուս հեղինակ հարուստ պ. Բէյք,
(նշանաւոր բառարանների դրող) 80 տարեկան ծե-
րունի, որ երկար ժամանակ ապրում էր գերմանա-
կան Կարլսրուէ քաղաքում, նորերումս ինչպէս
ասում է Բերլինի National Zeitung, սպանված
զտնվեցաւ իր սենեակի մէջ. Կասկածում են որ
նորա ծառան սպանել է նորան: Նա բռնվեցաւ:

— Ֆրանս „Siècle“ լրագիրը ասում է որ նիւ-
թերի բազմութեան պատճառով մարշալ Բազէնի
պրօցէսը յետ կը զգլի մինչև դեկտեմբեր կամ յուս-
վար ամիսը: Մարշալը հիւանդ է, Բայց ընկած է
բարոյապէս:

— „La Liberté“ լրագիրը ասում է, որ Էլզասի
և Լօթարինգիայի բնակիչների թիւը, որը ընդու-
նեցին Ֆրանսիական հպատակութիւնը, համարում է
միայն փարիզի մէջ 95,498 մարդիկներին:

— Ստրազբուրգի լրագիրը ասում է որ հոկտեմ-
բերի 1-ին մտան գերմանական զինուորական ծա-
ռայութիւնը մինչև 500 Էլզասցիները:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզի մէջ, — որտեղ անգլիացիների խօսքը
„ժամանակը սակի է“ սկսում է գործ զրկել — մը-
տաւ նորերումս մի նոր սովորութիւն, որ ժամա-
նակի նշան է: Մի ծանօթի կամ ազգականի թաղ-
մանը չատերել էլ չեն գնում, այլ ուղարկում են մի
տոմսակ, ինչպէս վիզիտ անելու ժամանակ: Տօմ-
սակի վերա տպած է օրինակ „իմ հօրեղորդ“ և
պլն, և տակը գրած մէկ երկու խօսք ցաւակցու-
թեան: Այդ տեսակ տօմսակների պատրաստ ծախ-
վում են խանութների մէջ:

Վարդուց արդէն Թուրքիայի տէրութիւնը ուղար-
կած էր իր հպատակներից զանազան դաւանու-
թեանց երկրաներին փարիզի մէջ ուսում առնե-
լու: Իւրաքանչիւր դաւանութեան պատկանող խմբի
հետ միասին ուղարկվեցաւ և դաւանութեան պատ-
կանող քահանայ, նոյնպէս և մի հայ-լուսա-
ւորական քահանայ որ Թուրքիայից ուսնի էր
ստանում: Բայց, որքան լսեցինք, Կոմունայից և
պատերազմից յետոյ էլ երկրաներ չուղարկվեցան
Փարիզ, իսկ Թուրքիայի տէրութիւնը աչքի տակ
ունենալով որ հայերի փարիզեան հասարակութեան
համար հարկաւոր է մի քահանայ, շարունակում է
նորան պահել Փարիզում և ուսնի տալ:

Կ. Պօլսի „Մասիս“ լրագիրը յետագայ անցք է
պատմում. Կլիսիլի իրիկուն իսակիւտարի Թուրք
կանայք ոտք ենկելով ծխախոտի միւսավաճառու-
թեան խանութները կոխեցին և ծխավաճառները
ծեծելով ծխախոտներն ալ փողոցը նետեցին: Գան-
տիլի մէջ և ուրիշ տեղեր ալ նմանօրինակ ան-
կարողութիւնք պատահեցան:

Վրտուի թէ մինչև իսկ երկու ծխավաճառ ծովը
նետուել են:

Նշենք լրագրի մէջ կարողեմներ, Արդուենէն լուր
կուսան թէ անցեալ շաբթու խումբ մի գողեր մի-
շալ քաղաքի կաթոլիկ հայոց Էկեղեցին մտել
2000 լրայի չափ բան գողցել են: Տեղւոյն հա-
յերն աղբրապիր մուղղած են Մեծ-Կաղարքոսին:

Բժշկական նոր հետազոտութիւնները հաստա-
տեցին, որ հասարակ տնային ճանճերը կարող են
միջնորդ լինել լիպոպոլեմի հիւանդութիւնների
տարածելու, տանելով ցարէ հիւանդներից առողջ-
ների վրա:

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱ- ԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Հոկտեմբերի 5-ին):

ՈՍԿԻՆ, (պօլսի մարտի)	6	18
ՓՈՒՍՆԱԿԱՅԻՐ (բարաթ). Պօլս.		
վճարելիք (լրա Օսմանեան)	6	75
ԲԱՄԲԱԿԻ Երեւանու.	5	60
„ Ամերիկայի սերմից.	7	10
ԹԱՄԲԱՔՈՒ Տրապիզոնի	12—13	—
ՇԱՔԱՐԸ Ռաի (Բրօցկու).	8	20
„ „ միւս տեսակը.	8	10
„ զազրանիցու արանցիք.	5	70
մաքը վճարած.	8	85
ՇԱՔԱՐԱՒԱՐԸ Ռաի.	7	30
ԲՈՒՐԻԹ Թուի.	9	80
„ Թաքեղամի.	6	50
ՂԱՉԱԿ Լիւսնի լաւ.	13	50
„ Մարտիկից, ցածրը.	12	50
„ Մօկօ, չառ լաւ.	14	70
ՊՂՊԵՂԸ.	11	50
ԵՐԱԿ.	3	50
ՄՈՄ.	11	20
ԱՒԻՐԸ Կրուպսաւոյ Ռու- սաստանի բէքը փութը.	3	60
ԱՒԻՐԸ Կրուպսաւոյ Ամեր- իկանի տեղական ջաղացի (Կե- անջայում).	№ 1 փութ 3	20
„ „ „ „ „	№ 2 „ 2	40
„ „ „ „ „	№ 3 „ 2	10
ԱՒԻՐԸ Գեանջու հասարակ.	1	90
„ Շորաղաւու.	1	80

Ս. ՊԵՏԵՐՍԲՈՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ:

(սեպտեմբերի 22-ին)

ԼՕՆԻՕՆ. — մի ռուբլի ամէ 32% պէնս (փոխա- նակ 40 պէնս):	
ՓԱՐԻՑ. — մի ռուբլի ամէ 348% սանտիմ (փո- խանակ 400 սանտիմ):	
Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ 152 1/2 Երկրորդ 149 1/2	

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Въ КАБИНЕТѢ моемѣ, находящемся на
Бегутовской улицѣ, въ домѣ Чешмаритова,
составляются дѣловыя бумаги, какъ—то: про-
шения, апелляціи, кассациі и проч. и также
проекты разнаго рода юридическихъ актовъ
и обязательствъ.
Плата возможно умеренная.
Петръ Антоновичъ Чарковскъ.

Կովկաս հիւրանոցի մօտ, Սօլո-
լակի փողոցումը, Բաղդադական Կա-
ռավարութեան դէմ ու դէմը „ԿԱՖԷ
ՌԵՍՏՈՐԱՆ ԴԸ ՊԱՐԻՑ“ կոչուած
հիւրանոցումը կարելի է վարձել չա-
փաւոր գներով, գեղեցիկ կահ ու
կարասիքով սենեակներ. թէ օրով
և թէ ամսով: Այդ հիւրանոցումը
կարելի է ստանալ և ճաշ նոյնպէս
չափաւոր գնով: 3 (3)

ПРОДАЕТСЯ Полная карманная
фотография, спросить у часового мастера Па-
лиева онѣ (же Бурназовѣ). 3 (3)